ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԴՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Օգոստոսի 31-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Գերմանիայի Դաշնային Հանրապետության պաշտպանության նախարարության խորհրդարանական պետքարտուղար Քրիստիան Շմիդթի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի եւ ՀՀ Զինված ուժերի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելով ներկաներին, գոհունակություն հայտնեց այն ջանքերի համար, որոնք ներդրվում են երկու երկրների միջեւ բարեկամական կապերի ամրապնդման գործում: Նորին Սրբությունը կարեւորեց պատվիրակության խաղաղասիրական առաքելությունը՝ վստահություն հայտնելով, որ այն իր բարի արդյունքներով պիտի նպաստի խաղաղության պահպանմանը եւ այդ ուղղությամբ երկու երկրների միջեւ համագործակցության ամրապնդմանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Հայ Եկեղեցու հարաբերություններին քրիստոնեական այլ եկեղեցիների հետ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մասնակցությանը տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված հոգեւոր առաջնորդների հանդիպումներին: Ամենայն Հայոց Հայրապետը տեղեկացրեց նաեւ առաջիկա նոյեմբեր ամսին Հայաստանում գումարվելիք ԱՊՀ երկրների հոգեւոր առաջնորդների համաժողովի նախագահության նիստի մասին:

Հանդիպման ավարտից հետո պատվիրակության անդամներն այցելեցին Մայր Աթոռի թանգարան, ծանոթացան հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային արժեքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ